հիւանդացնէ [44]: Հ. Ալիշան [45] կը գրէ, թէ «պատմութեան մի մէջ» կախարդ մը կ'ըսէ մէկուն. «Ո՛վ որդեակ, դա որ նեղէ զքեզ՝ չէ դեւ, այլ Հողմ դիպաւ քեզ»: Եւրոկիացիները [46] «Հանդէպք» բառով կը հասկնան «մտացածին ոգիներու (կամ մեռելներու) հովուն հանդիպիլը», որուն ենթարկուողը կը հիւծի: Ինքնաբերաբար ուշադրութիւնս կ'ուղղուի «այսահար» բառին վրայ. եւ մենք կ'եզրակացնենք՝ թէ հիները զիւահարութիւնը չար հովէ յառաջ եկած կը նկատէին. զի Եղնիկ ինքնին կը հաստատէ, որ «Այսն հողմ է, եւ հողմն ոգի»: Ասկից զատ «այս չար» բացատրութիւնն ալ կը պայծառանայ՝ այս տեսակէտով նկատուած: «Չար այսն», այսինքն չար հովը մարդու կը դարնէ եւ զայն «այսահար»՝ որ է ըսել «հովէ զարնուած» կը դարձնէ: Իրրեւ այսպիսի՝ չար հովը՝ չար ոգի մըն է, վասն զի «այս» միանգամայն «ոգի» ըսել է. ուստի յայտնի է թէ ինչո՛ւ «այս չար» անուանած են մեր նախնիները բո՛ւն չար ոգին՝ սատանան:

Ո՛չ միայն ոգի եւ հոգի բառերը լեզուաբանօրէն նոյն են; այլ նաեւ հով ու հողմ բառերն ալ ստուգաբանօրէն կը նոյնանան նախորդ երկու բառերուն հետ: Աճառեան լեզուաբանական տեսակէտով կը գրէ հոգի, ոգի, հով, հողմ բառերու մասին [47]. «Հոգի, ոգի. բնիկ հայ բառ՝ հնխ. poṷio ձեւից, որ ծագում է peu «փչել, շնչել» արմատից... Հոգի նշանակում է բուն «փչիւն, շունչ»: Նախնական մարդու համար «հոգի, քամի, շունչ, օդ, փչիւն» մի եւ նոյն գաղափարներն էին...: Ըստ այսմ ունինք զանազան լեզուների մէջ՝ համապատասխան բառեր «հոգի, շունչ, քամի» իմաստներով»: Հոգի եւ ոգի բառերու հետ նոյն է «հով»ը, «բնիկ հայ բառ՝ հնխ. pou «փչել, փչիւն» արմատից»: «Հողմի» մասին ալ կը գրէ. «Բնիկ հայ բառ, հնխ. oṇəmo- ձեւից, որ նշանակում է «շունչ, փչիւն, քամի». բուն արմատն է հնխ. eṇə-, oṇə, °ṇə «շնչել, փչել», որ an- ձեւով երեւում է զանազան

[44] Մ. Աբեղեան, Հայ ժողովրդական առասպելները, 373:

[45] Հին հաւատք, 1895, 205:

[46] Ց. Գազանճեան, Եւրոկիոյ Հայոց գաւառաբարբառը: Վիեննա (Ազգ. Մատեն. ԼԴ), 35:

[47] Արմատական բառարան, Դ. հատոր (1931), էջ 345—346, 373, 360—361: Հմմտ. նաեւ Բուզ եւ Հիւբ:

լեզուների մէջ. յիշենք այս տեղ կարեւորներից յն. ἄνεμος «շունչ, քամի», ἀνήνεμος, νηνεμος «առանց քամու հանդարտ օդ»: լտ. anima «օդի հոսանք, քամի, շունչ, հոգի». սանս. anila- «քամի, շունչ». հիսլ. animm, նիոլ. anam «հոգի»...: Հայերէնի մէջ հնխ. oṇəmo- ձեւից միջին ə ընկել է ըստ օրինի, -nm- տարանմանութեամբ վերածուել է -ղմ-... եւ միավանկ *ողմ ձեւի վրայ աւելացել է h յաւելուածը, ինչպէս յաճախ» [48]:

Երբ կ'ըսենք թէ Եղնիկ հողմն ու հոգին իրարու հետ կը նոյնացնէ, այս ըսել չէ թէ Եղնիկ իր աստուածաբանական ու փիլիսոփայական խոր հմտութիւնը պահ մը կը մոռնայ եւ մինչեւ ռամիկ հայեացքներ ընդդրկելու կը սորնանայ: Այլ՝ ասով ըսել կ'ուզենք, թէ Եղնիկ գիտէ թէ հայերէնի մէջ «հողմ, այս, շունչ, հոգի, ոգի» իրարու հետ նոյնացած են: Ինքն ալ կը գործածէ այդ բառերն՝ իբր իր հայրենի լեզուին բառերը, որոնք իրենց այդ նշանակութիւնն իրմէ յառաջ արդէն առած, մինչեւ իրեն հասած են եւ այդ իմաստով փիլիսոփայական հակասութիւն մը կը պարփակեն: Այսու հանդերձ Եղնիկ կը գործածէ զանոնք՝ «որպէս ի խարանաց հարցն մերոց առաջնոց՝ ըստ սովորութեան ի մեզ կարգելոյ»: Թէեւ հրեշտակներու եւ մարդկան հոգին «հողմ» եւ «շունչ» կ'անուանէ, բայց միանգամայն ուշադիր կ'ընէ զմեզ. «եթէ ի բնութենէ հողմոյ էին, ապա եւ նոքա յիրաւի մարմնաւորք կոչէին եւ ո՛չ անմարմինք»: Նոյնպէս «շունչ մարդոյն անմարմին» է:

Հ. Ա. ԳԱՐԱՄԱՆԵԱՆ

[48] Հմմտ. W. Oehl, Elementare Wortschöpfung, Anthropos, XIV, 444; XVI—XVII, 765, 772 եւն:

ԱՂԵՔՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆՑ

ՄԵԾ ՎԱՃԱՌԱԿԱՆՆ ԵՒ ԲՈՐԵԳՈՐԾԸ

—

Յիշողութիւններ՝ իր մահուան 20 ամեակի առթիւ:

(Շարունակութիւն;)

Թ.

Հայ թատրոնը Կովկասում: Թիֆլիսում հայերէն ներկայացումներ սկսել են տալ, անցեալ դարի միջինքին, նախ Ներսիսեան դպրոցի ընդարձակ սենեակներից մէկում: Երբ այցելուների թիւն սկսել է աճել, հայ թատերասէրները յատուկ դահլիճ են վարձել մի մասնաւոր բնակարանի մէջ, որ ծանօթ էր «Շէրմազանեանի դարբաս» անունով: Իսկական թատրոն, այս բառի բուն նշանակութեամբ, կառուցել է հայ զօրապետ Երեմիա Արծրունին, «Մշակի» խմբագիր-հրատարակիչ Գրիգոր Արծրունու հայրը, իր նշանաւոր «քարավանսէրայի» մէջ, քաղաքի կենդրոնում: Այնուհետեւ թատրոնական դահլիճներ են ստեղծուել նաեւ քաղաքի ուրիշ հայաշատ մասերում, ուր ներկայացումներ էին տալիս տեղական թատերասէրների խումբեր: Անցեալ դարի վերջերն էր, որ հիմնուեց Թիֆլիսի ամենագեղեցիկ թատրոնը. «Արիստական ընկերութեան թատրոն» կոչուած, ուր հայ դերասանական խումբը դտաւ իր մշտական եւ կանոնաւոր բեմը [1]:

Կովկասի հայ թատրոնի ոսկեդարն է համարւում 1880ական շրջանն, երբ նախաձեռնութեամբ մի հայ իշխանի, Ամատունի լաւագոյն թատերական խումբը կազմուեց: Այդ շրջանում էր, որ Կ. Պոլսից հրաւիրուեցան Պետրոս Ադամեան, դերասանուհիք Հրաչեայ, Սիրանոյշ եւ այլն: Այնուհետեւ հիմնեցին «Հայկական Դրամատիքական Ընկերութիւն», որ իր վրայ առաւ հայ թատրոնի ղեկավարութիւնը:

Մանթաշեանց ջերմ սիրող եւ պաշտպան էր հայ թատրոնի: Թիֆլիսում գտնուած ժամանակ նա իր մշտական օթեակն ունէր եւ յաճախ գալիս էր ներկայացումներին: Նա այս կամ այն ձեւով միշտ օգնում էր դերասաններին [2]:

1907 Դեկտ. 17ին Արտիստական Ընկերութեան թատրոնում տօնուեց տաղանդաւոր դերասան Յովհ. Աբէլեանի 25ամեայ բեմական գործունէութիւնը:

Թատրոնում, ինչպէս ասում են, տեղ գցելու տեղ չկար: Շնորհաւորութիւններից յետոյ, Աբէլեան բեմից իր շնորհակալութեան ճառն ասաց սրտի խորքից բղխած: Դեռ մինչեւ հիմայ կարծես հնչում են ականջիս մէջ նրա աղերսալից խօսքերը. «Մի խնդիրք ունիմ հայ հասարակութիւնից... Տուէք մեզ, հայ դերասաններիս, մի անկիւն, մի սեպհական անկիւն...»: Աբէլեան խընդրեց, որ փիթոյեան պիտի չկարողանար իր պահանջեց, որ Փիթոյեան պիտի չկարողանար իր սեպհական միջոցներով լրացնել եթէ Ադ. Մանթաշեանց չեանց օգնութեան չհասնէր: Մանթաշեանց՝ Ի. Ե. Փիթոյեվ առեւտրական տան գլխաւոր բաժնեէրն էր եւ ամբողջ այդ ծախքը Փիթոյեանի անձնականից բառնալով փոխարինեց առեւտրական տան հաշուին, որ նշանակում էր, մեծ մասամբ ընդունեց իր վրայ, որով կարելի եղաւ չէնքը վերջացնելով թէ՛ նոր ակումբը հաստատել եւ թէ նոր թատրոնը բանալ:

[1] Հետաքրքրական են այս չէնքի կառուցման պարագաները: Թիֆլիսի հինաւուրց հայ քաղաքացիներից մէկը, Եսայի Փիթոյեան, որ «Ի. Ե. Փիթոյեվ» առեւտրական տան պետն էր, ուզեց անդամակցիլ տեղական «Կրուժոկ» ակումբին, որի անդամները գլխաւորապէս՝ պետական ատիճանաւորներ էին, մեծ մասամբ ռուս եւ վրացի. հայ քիչ կար: Այս ժամանակ այդ շրջանը խիստ հակակրանք էր տածում հայ Բուրժուաների, հայ առեւտրականների նկատմամբ եւ քուէարկութեան ժամանակ Փիթոյեանի անդամակցութիւնը մերժուեց: Դրանից սաստիկ վշտացան ոչ միայն Փիթոյեան ինք, որի կինը ռուս դերասանուհի էր, այլ նաեւ այն երկու ռուս բարեկամներն, որոնք յանձնարարել էին Փիթոյեանին: Այս բարեկամներից մէկը նշանաւոր ռուս փաստաբան Օպոչինինն էր, որ յետոյ Կովկասի ռուսական պաշտօնական լրագրի խմբագրապետը դարձաւ եւ շատ համակիր էր հայոց: Փիթոյեան եւ Օպոչինին որոշեցին իրենց պարտութեան վրէժն առնել հետեւեալ կերպով: Փիթոյեան սկսեց չինել, Թիֆլիսի կենդրոնում մի գեղեցիկ եւ ընդարձակ չէնք, որ պիտի բովանդակէր իր մէջ ակումբի համար ամենամեծ յարմարութիւններն եւ միանգամայն նորագոյն ոճով մեծ թատրոն: Այս նոր ակումբը պիտի կոչուէր «Արտիստական Ընկերութիւն», որին պիտի անդամակցէին անխտիր՝ ամէն ազգից արժանաւոր անձեր: Շէնքը այնչափ մեծ ծախք

[2] Իրրեւ զուարճալի դէպք պատմեմ հետեւեալը: Թիֆլիսում մի տամբահայ երիտասարդ դերասան կար Գալֆայեան անունով, որ երեւակայում էր թէ ինքն երկրորդ Ադամեան է, թէեւ իրօք այս վերջինի գլուխն եւ արտաքին մի քանի ձեւերը միայն ունէր, բայց ոչ նրա տաղանդը: Սա մի օր եկել էր մեր գրասենեակն եւ կամեցել էր Մանթաշեանցին ներկայանալ: Մանթաշեանց չէր ընդունել եւ ուղարկել էր ինձ մօտ: Գալֆայեան եկաւ իմ սենեակն եւ բացատրեց թէ Թիֆլիսի դերասանական խումբը նրան ըստ արժանւոյն չէր գնահատում, ուստի խնդրում էր Մանթաշեանցի պաշտպանութիւնը: Միեւնոյն ժամանակ նա խնդրում էր, որ Մանթաշեանց նրան մի քիչ տայ իր արուեստի մէջ կատարելագործուելու: Եւ որպէս զի ես էլ համոզուիմ եւ ըստ այնմ միջնորդեմ, սկսեց յանկարծ Համլէթի «Լինե՞լ թէ չլինե՞լ» (To be or not to be) տեսարանը ներկայացնել բարձրաձայն...: Այս սքմուկը լսելով Մանթաշեանց ներս մտաւ իմ սենեակս եւ մեզ զարմացած: Յետոյ գրպանից 50 ռուբլի հանելով, գրեց Գալֆայեանի ձեռքը եւ «գնա, որդի, մեր գրաղմունքը մի խանդարի» ասելով ճամբեց:

© National Library of Armenia

դրում էր, որ հայ հասարակութիւնը յատկապէս հայ դերասանական խումբի համար կամ բացառապէս հայ ներկայացումների համար մի առանձին թատրոն կառուցանէ: Աբէլեանի այս «խնդիրքը» նորից յուզուեց երբ մի ամիս վերջը, այն է 1908 Յունուարին ուսուցեց դարձեալ այնտեղ, հայկական թատրոնական բեմի 50ամեակը[3]: Բեմի վրայ ձեւացուած էին նշանաւոր թատրոնական գործիչների կենդանի պատկերները, ոմանք կենդանի, ինչպէս Գարրիէլ Սունդուկեանց (թատերագիր, վախճ. 1912ին, 87 տարեկան) եւ Պետրոս Ադամեան, Գէորգ Զմշկեան (դերասաններ) եւ այլն. ինչպէս նաեւ Շէյքսպիր, Շիլլէր, Իբսէն եւ Զուդերման:

Մի քանի օր վերջը «Հայկ. Դրամատ. Ընկերութիւնը» ընդհանուր ժողով ունէր, որին յատկապէս հրաւիրուած էր Ադ. Մանթաշեանց: Օրակարգի վրայ գրուած գլխաւոր խնդիրը հայ թատրոնական գործը նիւթապէս ապահովելն էր: Ընկերութիւնը առատ ոռճիկներ էր տալիս դերասաններին, մեծ ծախքեր ունէր, թատրոնական դահլիճին վարձք էր տալիս եւ ուրիշ բեմական անհրաժեշտ ծախքեր. իսկ եկամուտը էր ծածկում, չէր բաւականանում. տարեկան 5000 բուբլու չափ բաց կար: Ներկաները՝ աջից, ձախից գանգատ մաքեր էին յայտնում, բայց որ եւ է գործնական առաջարկութիւն անող չկար, ամէնքի աչքը Մանթաշեանցի վրայ էր:

Ընդհանուրի ակնկալութիւնն այն էր, որ Մանթաշեանց կր կանգնի եւ կը յայտարարէ թէ ինքն ընդունում է դերասան Աբէլեանի խնդիրքը եւ սեպհական թատրոն կը նուիրէ հայ դերասանական խումբին: Բայց նա լուռ մնաց, ձայն չէր հանում: Այս ժամանակ ես ուզեցայ եւ առաջարկեցի թէ հայ թատրոնն ապահովելու կամ նրա բացը ծածկելու ամենադիւրին միջոցը ընկերական կամ հաւաքական գործակցութիւնն էր: «Այստեղ, ասի, ներկաների մեծագոյն մասը նիւթական ազատ միջոցների տէր է. մեզանից ամէն մէկը թող յանձն առնէ տարեկան 100 բուբլի նուէր տալ յօգուտ թատրոնի: Եթէ 100 հոգի այդ պարտականութիւնն ստանձնենք, գոյացած տարեկան 10·000 բուբլին բաւական է թէ՛ 5000 բուբլի բացը ծածկելու եւ թէ նոր դերասանների կրթութեան կամ այլ պէտքերի համար գործադրելու»: Այս առաջարկութիւն մնաց «ձայն բարբառոյ յանապատի». ժողովականները լուռ էին, որովհետեւ չէին իմանում Մանթաշեանցի տրամադրութիւնը: Մանթաշեանց տեսնելով, որ ինքն ընդհանուր ուշադրութեան առարկայ է, խզեց իր լռութիւնն, եւ ի մեծ յուսախաբութիւն Ընդհ. ժողովի, յուսացուած մեծ նուիրատուութիւնը չկատարեց, այլ այժ տուաւ իմ առաջարկութեան: Ժողովականները նրանից ուրիշ բան էին սպասում, ուստի դարձեալ լռեցին: «Եթէ այդպէս է, գոչեց Մանթաշեանց, ես յանձն եմ առնում ծածկել թատրոնի բացը. խոստանում եմ տարեկան 5000 բուբլի տալ, առ այժմ երեք տարի, յետոյ կը տեսնենք թէ ինչ կը պատահի»: Ընդհանուր ժողովը ծափահարութիւններով ընդունեց այդ նուէրն, բայց յայտնի էր, որ զոհունակութիւնը կիսատ էր...:

Հետեւեալ իրիկուն, ես գնացել էի Արտիստական Ընկերութեան Ակումբն, ուր մի խումբ ժողովականներ Պ. Ադ. Խատիսեանի շուրջը ժողովուած տաք տաք խօսում էին նախորդ օրուան Ընդհանուր Ժողովի եւ առհասարակ հայ թատրոնի ապագայի մասին: Ես մօտեցայ նրանց: Խատիսեան անմիջապէս ինձ յայտնեց իր եւ շատերի դժգոհութիւնն, որ Մանթաշեանց չարդարացրեց իր վրայ դրուած ընդհանուր ակնկալութիւնն եւ չխոստացաւ հանդիսաւորապէս թէ նոր թատրոն կը շինէ յատկապէս հայկական խումբի համար եւ այդ բանում մեղադրում էին ինձ...: Նրանք համոզուած էին թէ իբր թէ կանխաւ համաձայնութիւն էր գոյացել Մանթաշեանցի եւ իմ մէջ, որ ես իմ այն առաջարկութեամբը Մանթաշեանցի ուսերից այդ բեռը վերցնեմ: Ես չկարողացայ համոզել ոչ Խատիսեանին եւ ոչ միւսներին թէ ոչ մի այդպիսի «համաձայնութիւն» չէր կապուել եւ եթէ Մանթաշեանց նպատակ ունենար յատուկ հայ թատրոն կառուցանել, ես չէի որ պիտի խանգարէի: Ինձի դէմ դժգոհութիւնը Ակումբի շրջանից անցել էր ծաղրաթերթերին: Հայկական «Խաթաբալայի» խմբագրին (Երիցեանց) եւ գլխաւոր աշխատակիցը (Աշ. Աթ.) ամէն մէկն առան-

[3] Հայերէն փոքր ի շատէ կանոնաւոր թատրոնական ներկայացում տրուել է առաջին անգամ Մոսկուայում, 1858ին, այս պատճառով այդ տարին է համարւում ռուսահայ թատրոնի սկիզբը: Ներկայացուած առաջին թատերախաղն է եղել Գէորգ Բէկեանի «Հայի Սիւլէյման» կատակերգութիւնը:

ձին քաշքշել էին ինձ այդ առթիւ, թէեւ առանց վերաւորական հեգնանքի: Եւ այս առաջին անգամը չէր, որ այդ ծաղրաթերթն զբաղւում էր իմ համեստ անձնաւորութիւնով[4]:

Իրողութիւնն այն է, որ Մանթաշեանցին ես ասել էի իմ կարծիքը, նոյնը քանիցս ժողովների մէջ էլ կրկնել էի, թէ հայ դերասանական խումբն աւելի անհրաժեշտ կարիք ունի քան թէ սեպհական թատրոնական շէնքը: Մենք չունինք դերասաններին յատուկ՝ բեմական գիտական սիստէմի վրայ հիմնուած դպրոց եւ կամ «թատրոնական դասընթացքներ»: Մեր այժմեան դերասանները պարզապէս բեմի վրայ են սովորում իրենց արուեստը, որից տուժում է իսկական գեղարուեստը եւ հետեւաբար նաեւ թատրոն յաճախող հասարակութիւնը: Բացի դրանից, հայ դերասանի համար, եթէ նա ընդունակ է եւ յառաջադիմելու ձգտում ունի, շատ աւելի կարեւոր է, որ նրան դրամական նպաստ տրուի, որ նա երթայ կատարելագործուելու Պետերբուրգում, Մոսկուայում կամ Եւրոպայում, ինչպէս այդ լինում է դերարուեստի միւս ճիւղերին նուիրածներին, նկարչին, արձանագործին եւ այլն: Յամենայն դէպս Մանթաշեանցի մաքից երբեք չէր անցել յատկապէս հայկական թատրոնական շէնք կառուցանել: Նա գտնում էր, որ «Արտիստական Ընկերութեան» այն է Փիթոյեվի չքեղ թատրոնը նպաստաւոր պայմաններով միշտ տրամադրելի է հայ բեմի համար: Իսկ այդ «Փիթոյեվի թատրոնն» էլ արդէն մեծ մասամբ Մանթաշեանցի սեպհականութիւնն էր:

Թոշակաւոր ուսանողներ: Ադ. Մանթաշեանցի մեծագոյն բարեգործութիւնը յօգուտ իր ազգի՝ այն օժանդակութիւնն է, որ նա տասնեակ տարիների ընթացքում մատուցած է չքաւոր ուսանողներին: «Ուսանողը՝ մեր ազգի ապագան է» ասում էր նա եւ այդ սկզբունքը անյողդողդ առաջնորդ է ընդունած իրեն՝ ամբողջ 50 տարի, այսինքն իր անկախ առեւտրական գործունէութեան ամբողջ տեւողութեան ժամանակ: Նա առատօրէն օգնել է եւ հնարաւորութիւն է տուել հայ կարօտ պատանիներին, որ մտնեն բարձրագոյն դպրոց, համալսարան կամ որ եւ է մասնագիտական ուսումնարան, որպէս զի թէ իրենց ապագան ապահովեն եւ թէ օգտակար անդամ հանդիսանան իրենց ազգին:

Մանթաշեանց թոշակաւորներ ունէր Ռուսաստանի գրեթէ բոլոր բարձրագոյն դպրոցներում, որոնցից ոմանց նա օգնում էր դարձեալ, երբ ուզում էին կատարելագործուիլ Եւրոպայում: Քանի՞ հայ երիտասարդ բարձրագոյն ուսում է առած Մանթաշեանցի հաշուով, ես չգիտեմ: Մանթաշեանց ինքն էլ չէր իմանում: Ես կարծում եմ թէ առնուազն հազար երիտասարդի նա՝ այս կամ այն ձեւով՝ միջոց է տուած կանոնաւոր ուսում առնելու եւ իրենց համար ապրուստի հաստատուն գիրք ստեղծելու: Ես անձամբ գոնէ հարիւր հոգի ճանաչում եմ, բժիշկ, ուսուցչապետ կամ ուսուցիչ, ճարտարապետ, հանքարան կամ այլ մասնագէտ, որոնք իրենց ամբողջ ուսումը եւ գիրքը պարտական են Մանթաշեանցին: Այս թոշակաւորները ցրուած են Ռուսաստանի բոլոր անկիւններում, ուր որ գործունէութեան ասպարէզ են գտած: Նրանցից շատերը յայտնի հասարակական գործիչներ են դարձած:

Երկու հոգի կար, որոնք առանձնապէս զբաղուած էին այս թոշակաւորների հարցով. Մանթաշեանցի գանձապետը, որ միանգամայն իր քենակն էր, ինչպէս առիթ ունեցայ արդէն յիշելու եւ Գէորգ Շահումեան, որին Մանթաշեանց ուղարկել էր համալսարան եւ այնտեղ իր ուսումն աւարտելուց յետոյ ընդունել էր տունը, եւ պահում էր իբրեւ իր զաւակների դաստիարակ եւ ուսման վերակացու:

Մանթաշեանց որոշ թիւ ունէր սահմանած թոշակաւորների համար, բայց շատ անգամ բացառութիւն էր անում, նորերն ընդունում, որով այդ իբր թէ «որոշ թիւը» շարունակ աճում էր: Մի անգամ Համբար-

[4] Մի անգամ նա այսպէս էր ներկայացրել «Հայոց Ազգագրական Ընկերութեան» վարչութեան նիստն, որտեղ ես ոանձագահ էի, Եր. Լալայեանց՝ քարտուղար, իսկ մի հարուստ հայ վաճառական, Ադ. Մէլիք Ագարեանց՝ նախագահ էր: Նստած ենք իբր թէ մի ճոխ սեղանի շուրջը, ամէն տեսակ քաղցրաւէնիքով եւ ոմպելիքով լիքն եւ ես բաժակը ձեռքս ոտքի կանգնած ասում եմ. «Ի՞նչ լաւ կր լինէր, որ մենք շաբաթը տասն օր այստեղ, այսպիսի նիստեր ունենանք»: Մի ուրիշ անգամ, չեմ յիշում ի՞նչ բարեգործական նպատակի համար, դարձեալ Թիֆլիսում պարերեկոյթ էր տրուած, որտեղ ես դարձեալ կարգադրիչ-գանձապահ էի: Խաթաբալան ինձ նկատել էր այդ տեղ պաստուհի (balerine) դիրքով ու համապատասխան հագուստով...:

© National Library of Armenia

ձում Առաքելեան[5] նամակ էր գրել Պարիս Մանթաշեանցին եւ խնդրել, որ իբրեւ բացառութիւն իր որդուն ընդունի իր թոշակաւորների կարգը: Սա նրա միակ որդին էր, որ սովորում էր Պրագում: Մանթաշեանց՝ գիտնալով, որ ես շատ մօտ էի «Մշակ»ի խմբագրութեան, պատասխանն ինձ էր ուղղել Թիֆլիս, որտեղ ասում էր թէ իր՝ արտասահմանի համար սահմանած թոշակաւորների թիւը լրացած է, բայց «որովհետեւ Համբարձումը ազգօգուտ մարդ է (այդ նրա սեպհական բառերն են) ես ուրախութեամբ կը կատարեմ նրա խնդիրքը»:

Մանթաշեանց մեծ հոգածութիւն ունէր «իր ուսանողների» մասին եւ նա զանազան կերպ քաջալերում էր նրանց: Երբեմն նա այսպիսի բան էր անում: Գալիս էր օրինակի համար Մոսկուա կամ Պետերբուրգ եւ այնտեղ սովորող իր բոլոր թոշակաւորներին հրաւիրում էր իր քովը ճաշի եւ նրանց հետ ընտանեբար տեսակցելուց եւ հիւրասիրումից յետոյ, ուսանողները իրենց պնակի տակ գտնում էին մի մի ծրար, որի մէջ իբրեւ բացառութիւն մի մի ամսաթոշակ էր գրուած...:

Պրոֆ. Նիկոդայոս Ադոնց, որ նոյնպէս նրա սանն էր թէ Պետերբուրգում եւ թէ Եւրոպայում ուսած ժամանակ, պատմում է թէ մի օր Մանթաշեանց նրան ճաշի է հրաւիրում Պետերբուրգում եւ խրախուսելու համար ասում է, «Որդի՛, ես ուզում եմ, որ դու մեր Պատկանովը լինիս», այսինքն յաջորդ լինիս գիտնական Քերոբէ Պատկանեանին, որ Պետերբուրգի համալսարանի հայերէնի ուսուցչապետ էր եւ Ադոնց իրագործեց իր բարերարի բաղձանքը:

Մանթաշեանց սաստիկ ուրախանում էր երբ որ եւ է թոշակաւորից նամակ էր ստանում թէ ինքն արդէն աւարտել է բարձրագոյն դպրոցն եւ շնորհակալութիւն էր յայտնում: Այս պարզ շնորհակալութիւնից նա անմիջապէս այնքան զգաւում էր, որ աչքերը արտասուքով լցւում էին: Դժբախտաբար ոչ բոլոր սաները կատարում էին այդպիսի մի սովորական քաղաքավարական պարտականութիւն եւ երբեմն նոյն իսկ մոռանում էին գրել գրասենեակին թէ իրենք աւարտած դուրս են եկած արդէն համալսարանից... եւ շարունակում էին ստանալ այն թոշակն, որ գանձապահն ամէն 3 ամիսը մի անգամ կանոնաւորապէս ուղարկում էր նրանց ուսանողական հասցէին: Երբ Մանթաշեանց լսում էր այդ, նեղանում էր, բայց ձայն չէր հանում: Նա միշտ ներողամիտ էր ուրիշների, մանաւանդ իր ուսանողների պակասութիւնների նկատմամբ:

Ինչպէս ասի, շատ հասարակական գործիչներ կան, ողջ կամ մեռած, որոնք Մանթաշեանցի ծախքով են ուսում առած եւ ես մտադիր չեմ առանձնապէս խօսիլ նրանց մասին: Բայց կայ մէկն, որ բացառիկ դեր է խաղացած հայկական կեանքում եւ եթէ պարագաների բերմամբ նա կեանքից չզրկուէր եւ այժմ կենդանի լինէր, շատ մեծ դերք պիտի գրաւէր Խորհրդային Միութեան, այսինքն ամբողջ Ռուսաստանի մէջ: Այդ մէկը՝ համբաւաւոր Ստեփան Շահումեանն է, հայ համայնավարների առաջին պարագլուխն, որ իր ժամանակ նոյն իսկ ամբողջ Կովկասի մեծագոյն համայնավարն է եղած: Ես նրան ճանաչում էի Թիֆլիսում: Ստ. Շահումեան՝ Մանթաշեանցի աւագ որդու Յովհաննէսի, դպրոցական ընկերն էր եւ առատօրէն վարձատրուած է Մանթաշեանցից: Շահումեան իր աշխարհահայեցողութեամբ մեծապէս տարբերւում էր իր համալսարանական հայ ընկերներից, որի ապացոյցն երեւաց միայն 1917ին Մեծ Յեղափոխութեան ժամանակ: Ինչպէ՞ս պիտի վարուէր արդեօք Մանթաշեանցի այս որդեգիրն իր բարերարի նկատմամբ, որ Կովկասի ամենամեծ «Բուրժուան» էր, եթէ սա դեռ կենդանի լինէր եւ նրա իշխանութեանն ենթակայ: Որքան ես ճանաչում էի Ստ. Շահումեանին, յատկապէս 1914ի պատերազմից յառաջ, նա անկեղծ գաղափարական մարդ էր: Նա Բաքու էր գտնւում յեղափոխական գործով, երբ անգլիացիք Պարսկաստանի ճանապարհով մտան քարիւղի քաղաքը: Անգլիացիք ձերբակալեցին Շահումեանին իր 25 ընկերների հետ, որոնց պարագլուխն էր ինք, եւ աքսորեցին Անդրկասպեան երկիրը, ուր նրանք բոլորն էլ, անապատի մէջ, բռնի մահով զոհն իրենց վախճանը:

Հայ համայնավարները՝ Հայաստանին տիրելուց յետոյ բազմաթիւ յիշատակներ կանգնեցին Շահումեանին. նրա անունով

[5] Մանթ. եռանդուն հրապարակագիր, որ Գր. Արծրունուց եւ Ադեքս. Քալանթարից յետոյ «Մշակ» լրագրի խմբագրապետն ու դեկավարն էր Թիֆլիսում:

ջրանցք, արձան եւ նոյն իսկ մի մեծ գիւղ, Ստեփանաւան, որ նախկին Զալալօղլին է, բարձր բլուրների մէջ գետեղուած: Նոյն իսկ Ռուսաստան կամ Խորհրդային Միութիւնը հարկ համարեց պատուել նրա յիշատակը եւ իր պատերազմական նաւերից մէկը նրա անունով Шаумян կոչեց որ նախկին Быстрый՝ մարտանաւն է[6]:

Հայ գրագէտներ: Մանթաշեանց երբեք չէ խնայել իր օգնութիւնն երբ նրան դիմել են ի նպաստ այս կամ այն հայ հեղինակի, մանաւանդ երբ ինք անձամբ ճանաչում էր նրան: Բայց կար մէկն, որ իր ամբողջ գրական գործունէութիւնը Մանթաշեանցին էր պարտական: Այդ մէկը հանրածանօթ հնագէտ Ադեքսանդր Երիցեանցն էր: Մանթաշեանց ճանաչում էր Երիցեանցին այն ժամանակից երբ սա «Վաճառական» անունով մանակից երբ սա «Վաճառական» անունով չաբաթաթերթ էր հրատարակում, 1866ին: Երբ աննպաստ պարագաների բերմամբ Երիցեանց եւ իր ընկերն ազգագրագէտ Գէորգ Տէր Ադեքսանդրեանց 13 ամիս շարունակելուց ետքն ստիպուեցան «Վաճառականը» դադրեցնել, Մանթաշեանց իր հովանաւորութեան տակ ընդունեց Երիցեանցին եւ նրան բաւականաչափ կենսաթոշակ յատկացնելով միջոց տուեց, որ սա այնուհետեւ ամբողջապէս նուիրուի պատմական հնախուզութեան: Այս օժանդակութեան շնորհիւ Երիցեանց կարողացաւ այնպիսի ընտիր պատմական հաւաքածոյներ եւ ուսումնասիրութիւններ հրատարակել: Երիցեանց մեռաւ 1902 Փետրուարին: Խրիմեան կաթողիկոս պատահմամբ Թիֆլիս էր գտնւում եւ ուզեց անձամբ խօսիլ դամբանականն, որի մէջ առանձնապէս չեշտեց թէ «Մանթաշեանց է եղած որ բոլորովին նիւթական հոգսերէն ազատուելով միջոց էր տուած հանգուցեալ պատմաբանին զուտ գրական գործերու պարապելու»[7]:

Մեր գրագէտներից շատերը՝ Երիցեանցի մահից յետոյ ձգտում էին նրա տեղը գրաւել եւ Մանթաշեանցի թոշակաւորը դառնալ, բայց Մանթաշեանց ոչ մէկին խօսք չէր տալիս. նա առհասարակ քիչ էր ճանաչում հայ հեղինակներին եւ չէր հետաքրքրւում նրանց գրածներովն, ի բաց առեալ երբ նրա մերձաւորներից մէկն ու մէկը նրա յատուկ ուշադրութիւնն էր հրաւիրում այս կամ այն գրողի կամ գրուածքի վրայ:

Մի օր Թիֆլիսում, տունս եկաւ մեր ժողովրդական բանաստեղծ Յովհաննէս Թումանեան, որի հետ լաւ ծանօթ էի, բայց ինչպէս ասում են, գնալ-գալ չունէինք:

Թումանեան մեծ ընտանիքի տէր էր. 10 զաւակ ունէր, որոնք պէտք ունէին կրթուելու. իսկ իր նիւթական միջոցները բաւական համեստ էին: Խրիմեան գնահատում էր Թու-

[6] Թէ ինչ մեծ հեղինակութիւն էր վայելում Ստեփան Շահումեան ռուս յեղափոխականների բարձր շրջանում, կարելի է տեսնել հետեւեալ դէպքից, որ ուրիշ տեսակէտներով եւս արժանի է յիշատակուելու:

Երբ Լենին, Տրոցկի եւ ընկերներն 1917 Նոյեմբեր 7ին թեթեւ զաւադրական պատրաստութեամբ բայց մեծ յանդգնութեամբ կէրէնսկու ժամանակաւոր կառավարութիւնը վար առնելով իրենք նրա տեղն անցան, եւ իրենց իսկ խոստմանութեամբ անսպասելի կերպով ամրացան, նրանք նոր կառավարութիւն հաստատեցին, որի մէջ Լենին (Վլադիմիր Ուլեանով), ժողովրդական գործավարների նախագահ, Տրոցկի (Բրոնշտէյն) արտաքին գործերի գործավար եւ Ստալին (Զուդաշվիլի-Վրացի) նորահաստատ «Ազգութիւնների» գործավար եղան: Արտաքին քաղաքականութեան վերաբերեալ սրանց առաջին կարեւոր ձեռնարկն եղաւ ի նպաստ հայոց մի հրովարտակ հրատարակել 1917 Դեկտ. 29ին, որտեղ նոր Յեղափոխական կառավարութիւնը բարձրագոյն յայտարարում էր թէ Ռուսաստանը պիտի պահանջէր Թիւրքիայից, որ նա վերադարձնէ իրենց նախկին բնակավայրերը բոլոր տարագրուած հայերին: Եւ երբ այս ձեւով հայ ժողովուրդն իր ազգային միութիւնը գտնէ, նա ազատ քուէարկութեամբ պիտի որոշէ թէ ի՞նչ ձեւի կառավարութիւն է ուզում իր համար: Այս քուէարկութիւնը կատարելու եւ մինչեւ նրա արդիւնքն իրականանալը Հայաստանը կառավարելու համար յատուկ հայկական Յանձնաժողով պիտի կազմուէր, որի դեկավարը եւ նախագահը պիտի լինէր Ստեփան Շահումեան: Այս կերպով Լենին եւ Շահումեան առաջին անգամ հին էին դնում «Անկախ եւ Միացեալ Հայաստան» սկզբունքին...: Երբ այս պաշտօնական, ուղղակի ազատարար եւ անսպասելի հրովարտակը լոյս տեսաւ, ես նոյն օրն իսկ, ամբողջապէս ֆրանսերէն թարգմանելով հեռագրեցի Պարիս ի դիտութիւն Ազգային Պատուիրակութեան նախագահ Պող. Նուպարին, որ հեռագրական պատասխանով խորին շնորհակալութիւն յայտնելուց յետոյ խնդրում էր որ շարունակեմ դեկուցումներ ղրկել նրան իրաց յետագայ ընթացքի մասին:

Դժբախտաբար՝ պատերազմական եւ քաղաքական աննպաստ հանգամանքների հետեւանքով բոլշեվիկ իշխանութիւնը Բրէստ-Լիտովսկում ոչ միայն մոռացաւ իր այս հրովարտակն այլ նաեւ զիջեց Թիւրքիային Հայաստանի այն մաս որ 1878ին Բերլինի դաշնագրով կցուած էր Կովկասին ինչպէս որ այնուհետեւ Դաշնակից Մեծ Պետութիւններն էլ նոյն ձեւով, Լոզանում պիտի մոռնային իրենց կրկնակի հանդիսաւոր յայտարարութիւններն ի նպաստ նոյն հայ ժողովրդի եւ պիտի լքանէին իրենց «փոքրիկ դաշնակիցների» (petits alliés) ամենարդար դաւը...:

[7] Ես շատ անգամ գնացել իմ Երիցեանցի տունը, ուր միշտ նրան գտնում էի գրքերի մէջ թաղուած: Այնքան խոր հմտութիւն էր ձեռք բերել հանգուցեալն, որ երբ որ եւ է պատմական խնդրի մասին նրանից ազբիւր կամ տեղեկութիւն էի խնդրում, նա ոչ միայն դրբեր էր շարում առջեւս, այլ նաեւ Գրիգորներ եւ երբեմն նոյն իսկ էջեր մատնանշում: — Բաքուցի մի հարուստ վաճառական՝ Դաւիթ Աւան Իւզբաշեան, որ էջմիածնում նոր Մատենադարան է շինած իր ծախքով, գնեց Ադ. Երիցեանցի ձոր մատենադարանն եւ ընծայեց Էջմիածնին:

© National Library of Armenia

մանեանին եւ կամեցել էր նրան անձամբ տեսնել: Այս հրաւէրն ընդունելով Թումանեան առնում է, ինչպէս ինքը պատմում էր, «մի քանի զոյգ զաւակ» եւ ներկայանում է կաթողիկոսին: Հայրիկ երբ լսում է թէ նա 10 զաւակ ունէր, իր սովորական կատակաբանութեամբ ասում է նրան. «Ադ ի՞նչ է. դուն զաւակ ունենալը բանաստեղծութի՞ւն դրել դիտցար»:

Թումանեան յայտնելով իր կարօտ վիճակը խնդրում էր իմ միջնորդութիւնն, որ Մանթաշեանց նրան օժանդակ ի՛նչ ձեւով, որ ինք հնարաւոր կը համարի:

Մանթաշեանց Թումանեանին չէր ճանաչում: Երբ ես յայտնեցի Թումանեանի խնդիրքը, նա ի սկզբան անտարբեր վերաբերմունք ցոյց տուաւ: Բայց ես ուժեղ դէնք ունէի նրան համոզելու: Ես նրան ասի թէ Ցովհ. Թումանեան Սայեաթ-Նովայի յաջորդն ու շարունակողն է: Մանթաշեանց մնաց հիացած: Սայեաթ-Նովան այդ մեծ ժողովրդական երգիչը նրա ամէնից սիրելի հեղինակն էր: Ես շատ անգամ եմ տեսել, որ Մանթաշեանց ազատ ժամանակ իր առանձնասենեակում մինակ նստած կամ բարձի մրայ ընկղմանած, եռանդով կարդում էր Սայեաթ-Նովայի հեղինակութիւնը: Նա այնքան սիրում էր, որ Սայեաթ-Նովայի հայերէն եւ վրացերէն տաղերից շատերը բերանացի գիտէր եւ յարմար առթիւ արտասանում էր: Արդ երբ նա լսեց թէ Թումանեան՝ իր սիրած բանաստեղծի հետեւողն է, իսկոյն ընդունեց նրան եւ օգնեց: Բայց երբ իմացաւ թէ Թումանեան դաշնակցական էր, խստիւ պատուիրեց որ ոչ ոք չիմանայ թէ ինք նպաստում է նրան: Մանթաշեանց մեծապէս զգուշանում էր որ եւ է հայ յեղափոխականի հետ յարաբերութիւն ունենալուց, այսինքն ոչ թէ չէր ուզում նրան տեսնել կամ նրան օգնել, այլ զգուշանում էր, որ գուրբար չիմացուի: Մի անգամ Թիֆլիսում ոստիկանութիւնը ձերբակալել էր բաղմաթիւ յեղափոխականներ, դաշնակցական, հնչակեան, էս-էռ (սոցիալիստ-յեղափոխական) եւ այլն եւ նրանց մեծ մասին աքսորել Ռուսաստանի ներքին նահանգները, որոշ ժամանակով: Այդպիսի աքսորման դատապարտեալների մէջ էր նաեւ Սեւ Սանդրօն, իբրեւ հնչակեան: Մանթաշեանց գիտերով կանչել է տալիս նրան իր տունը եւ խմանում է նրանից, որ աքսորւում է 6 ամսով: Մանթաշեանց տալիս է նրան այնպիսի մի գումար, որով նա կարող էր հանգիստ ապրել իր աքսորավայրում եւ եւ դատնալով իր գործին վերսկսել: (Սանդրօն մանրավաճառ էր եւ իր պարկեշտութեանը համար ամէնքից սիրուած:) Այս դէպքը Սանդրօն ինքն է պատմել ինձ, Մանթաշեանցի մահից յետոյ:

Մի անգամ Մանթաշեանցի մտերիմներից մէկը, որ մտաւորական էր եւ հայ դրականութեան հմուտ, դիմել էր նրան խնդրելով, որ նպաստ տայ Մուրացանին, որ աղքատ ու հիւանդ պառկած էր Թիֆլիսում, քաղաքային հիւանդանոցում: Մանթաշեանց նրան պատասխանեց. «ես էդ մարդուն չեմ ճանաչում, բայց կը տամ ֆո խաթրու»[8]:

Մանթաշեանց բացի բազմաթիւ հայ գրագէտներին նպաստելուց, որոնցից ոմանք դեռ կենդանի են, օգնել է նաեւ այն ազգային գործիչներին, որոնք Եւրոպայում հայ ազգային գատին էին ծառայում իրենց հրատարակութիւններով կամ հայ գրականութիւնն էին զարգացնում: Այսպէս նա մեծապէս օգնած է Միհաս Չէրազին իր «l'Arménie» թերթի հրատարակութեան համար: Մասնակի նպաստ է տուած մի քանի տարի նաեւ Արշակ Չօպանեանին՝ իր «Անահիտ»ի համար: Նպաստած է նմանապէս Պարիզում Յովհ. Շահնազարին, որ Կ. Պոլիս դառնալով կարողանայ իր «Հայրենիքը» վեր հրատարակել, Օսմ. Սահմանադրութեան յայտարարումից յետոյ (1908):

Անկարելի է յառաջ բերել բոլոր այն

[8] Մուրացան՝ իրրեւ վիպասան յայտնի է իր «Դէորգ Մարզպետունի» ազգային պատմական վէպով, որ նրա գլուխ գործոցն է: Նա խնամում էր Թիֆլիսի հիւանդանոցի հոգեկան հիւանդների բաժնում եւ մեռաւ 1908ին: Նրան թաղեցինք Խոջեւանքի գերեզմանոցում մեծանուն վիպասաններ Րաֆֆիի եւ Շերենցի կողքին, Թիֆլիսում:

Այդ 1908 թուականը առհասարակ ազգասիրեր տարի է եղած հայ գրագէտների համար թէ ռուսահայ եւ թէ տաճկահայ: Մուրացանից յետոյ վախճանուեց Խրիմի Սիմֆէրոպոլ քաղաքում, Գէորգ Դողոխեանց, հայոց ամէնից ժողովրդական երգի՝ «Ծիծեռնակի» հեղինակը: Իսկ տաճկահայերից՝ նոյն տարին մեռան՝ Եղիա Ցէմիրճիպաշեան, այդ յոռետես փիլիսոփան ու բանաստեղծը, որի տխուր վախճանը քիչերին է կարծեմ յայտնի: Նա ինքնասպան եղաւ, ինքնիրեն իր սենեակում կախելով: — Մի ուրիշ տաճկահայ խոստմնալից ռոմանտեղծ եւս, Միսաք Մեծարէնց հազիւ 23 տարեկան հասակում, հեռացաւ այս աշխարհից: Դարձեալ նոյն 1908ին, առաջինների նման չքաւորութեան մէջ մեռաւ Մարկոս Ադաբէգեան, որ թէեւ ծննդեամբ տաճկահայ էր, Զմիւռնեացի, բայց գործել է նաեւ ռուսահայոց մէջ: Նա հրատարակում էր Թիֆլիսում «Կռունկ Հայոց Աշխարհի» ամսաթերթը:

մասնաւոր բարեգործութիւններն որոնք Մանթաշեանց անում էր իբրեւ մի սովորական գործ, թէ Ռուսաստանում եւ թէ Եւրոպայում, առանձնապէս Պարիսում: Նրա բարեսրտութիւնը յայտնի էր բոլոր իր ծանօթներին եւ սրանք շատ անգամ դիմում էին նրան, որ այս կամ այն անհատին կամ հաստատութեան օգնէ եւ նա գրեթէ միշտ կատարում էր նրանց խնդիրքը, աւելի կամ նուազ չափով: Շատ էր տալիս երբ ինքն էլ համակրում էր այն անհատին կամ հիմնարկութեան, որի համար նպաստ էին խնդրում:

Թիֆլիսում նրան ամէնքը ճանաչում էին, մեծ ու փոքր, հայ կամ օտար: Երբ նա իր պարթեւ հասակով եւ ձեռքի գաւազանը խաղացնելով անցնում էր փողոցով, ամէնքի հայեացքը նրան էր ուղղւում: Իսկ կարօտեալները կամ չքաւորներն անձկանօք նրա անցնելուն էին սպասում, որպէս զի մօտենան եւ մօտենում էին առանց քաշուելու: Ես յիշում եմ այսպիսի մի դէպք:

Թիֆլիսի գրասենեակում, Մանթաշեանց իր պարապման սենեակի մէջ դատ յարմարցուած մի անձնական դրամարկղ ունէր, ուր նա պահում էր իր անձնական թղթերն եւ պատրաստի փող, որպէս զի իր անձնական պէտքի համար շարունակ բանկին չդիմէ: Մի օր, դրասենեակում դրամունքը վերջացնելուց յետոյ, նա իր դրամարկղը բացաւ եւ այնտեղից 20 հատ 5 ռուբլեանոց ոսկի առնելով դրեց իր բաճկոնակի գրպանը: Երկուքս միասին դուրս ելանք. գնում էինք տուն ճաշելու:

Երբ գնում էինք, զանազան անցորդներ մի առ մի մօտենում էին նրան եւ նա աջ ու ձախ բաժանում էր իր գրպանի ոսկիները: Միայն երկուսին նա մերժեց, «դու երէկ ստացար» ասելով: Մինչեւ տուն հասնիլը նրա գրպանում այլ եւս մանր փող այսինքն ոսկի չէր մնացել եւ հետեւեալ օրը ստիպուած էր նորից դիմել իր դրամարկղին...: Այս բանը շատ յաճախ էր պատահում նրան:

Մանթաշեանցի այս անընդհատ եւ անսպառ բարեգործութիւնը հայոց թշնամիների աչքի փուշ էր դարձել եւ հայատեաց մի ռուս հրապարակախօս նրան կոչել էր «բարեգործութեան ախտով վարակուած»: Այս հրապարակախօսը նշանաւոր Վասիլի Վէրիչկօն էր 1897ին Թիֆլիսի պաշտօնական Кавказ լրագրի խմբագրապետն, որ Կովկաս գալու օրից սկսած իրեն բան ու գործ էր արել իր լրագրում հայի անունը մրոտել: Այդպէս էր այն ժամանակ տեղական կառավարչական շրջաններում տիրող տրամադրութիւնը, սկսելով Կովկասի կառավարչապետ Իլիան Գոլիցինից: Իրերի զարմանալի ընթացքով այս «բարեգործութեան ախտով վարակուած» վաճառականն եղաւ, որ պատճառ դարձաւ Վէրիչկօյի արտաքսմանը, նոյն իշխ. Գոլիցինի ձեռքով: Արժէ յիշատակել այս դէպքը: Գոլիցին մի պաշտօնական երեկոյթ էր սարքել իր պալատում եւ Կովկասի այլեւայլ առաջնակարգ ներկայացուցիչներին հրաւիրել, որոնց մէջ էր նաեւ Մանթաշեանց: Վէրիչկօն զայրացել էր, որ մի հայ վաճառական արժանացել էր այդ «պատուին» եւ հետեւեալ օրը մի մեծ թերթի մէջ նախատել էր այդ առթիւ Մանթաշեանցին: Բայց նա անխոհեմութիւն էր ունեցել քողարկուած ձեւով խայթել նաեւ իրաւիրողին: Իշխան Գոլիցին կատաղել էր այդ խայթուածքից եւ հրամայել էր, որ 24 ժամում Վէրիչկօն Թիֆլիսից հեռանայ: Այս դէպքը մասամբ ծառայեց նոյն իսկ Գոլիցինի հայատեաց քաղաքականութեան փոփոխման: Հայակեր Վէրիչկօյի տեղ ռուսական պաշտօնական թերթի անօրէն նշանակուեց հայոց բարեկամ Օպուչինինը, մի նշանաւոր ռուս փաստաբան-հրապարակագիր:

Տաճկահայ գաղթականներ: Երբ Թիւրքիայի 1895—1896 հայկական կոտորածներից յետոյ սահմանակից Թրքական նահանգներից հազարաւոր հայ փախստականներ Կովկաս ապաստանեցան, նրանց մի մասը հասաւ մինչեւ Թիֆլիս, յետին ծայր կարօտութեան մէջ: Տեղացի հայերի առատօրէն ընձեռած նպաստներից զատ ռուս կառավարութիւնն էլ իր կողմից միջոցներ ձեռք առաւ այդ անտէր անտուն պանդուխտներին օգնելու եւ տեղաւորելու համար: Այդ նպատակով Թիֆլիսի նահանգապետը մի նպաստամատոյց Յանձնաժողով կազմեց 4 անդամից բաղկացած, որի նախագահը ռուս էր, Բէյտէր ազնուական, մի անուանի փաստաբան, որ մօր կողմից հայ արիւն ունէր եւ բարեկամ էր հայոց. միւս անդամներն էին մի վրացի, որ Ոստիկանութեան ներկայացուցիչն էր եւ 2 հայ: Այս հայերն էին՝ Կովկասեան Հայոց Բարեգ. Ընկերութեան Նախագահ Աղեքս. Անանեանց եւ Աղեքս. Մանթաշեանց: Յանձ-

© National Library of Armenia

նաժողովի կարգադրութեան տակ որոշ գումար էր գրուած անմիջական օգնութիւն հասցընելու եւ մանաւանդ փողոցներում մուրալն արգիլելու համար։ Նահանգապետն եւ Բէյտէր՝ Մանթաշեանցին Ցանձնաժողովին անդամ էին ընտրել, որպէս զի ծախքի մեծ մասը նրա վրայ բեռցնեն։ Եւ իրօք Մանթաշեանց եղաւ, որ յատուկ դրասենեակ վարձեց այդ նպատակի համար եւ դրասենեակը կահաւորեց իր ծախքով։ Իսկ ես կատարում էի քարտուղարի պաշտօնն եւ միեւնոյն ժամանակ թարգման էի ռուս նախագահի եւ տաճկահայ խնդրատուների մէջ։ Բայց Ցանձնաժողովի տրամադրութեան տակ դրուած գումարը մի շաբաթուան մէջ վերջացաւ, այնուհետեւ նպաստներն սկսան տրուիլ։ . . Մանթաշեանցի քսակից։ Լուր տարածուեց քաղաքում թէ «Մանթաշեվը փուղ է բաժանում» եւ ահա ամէն կողմից հարիւրաւոր խնդրատուներ, կարօտ եւ անկարօտ, գաղթական եւ տեղացի թափուեցան նմաստամատոյցի դրասենեակն, որոնց հետ ես ստիպուած էի օրն ի բուն զբաղիլ։ Նրանք այնքան նեղը դրին Բէյտէրին եւ Մանթաշեանցին, որ Բէյտէր փակեց Ցանձնաժողովն եւ հեռացաւ։ Մանթաշեանց կարգադրեց, որ այն տաճկահայերն, որոնք կամենում էին հայրենիք վերադառնալ Սեւ Ծովի եւ Մի-ջերկրականի նաւահանգիստներով, կարող էին ձրի մեկնել իր ջոգենաւերով, որչափ որ հնարաւորութիւն կար։ Նրա այս արտօնութիւնից օգտուեցան շատերը, մանաւանդ 1908 Յուլիսի Օսմանեան Սահմանադրութեան հրատարակումից յետոյ։

Մանթաշեանց առ հասարակ զգուշանում էր անձամբ անդամակցել բարեգործական հաստատութիւններին, բայց երբեք որ եւ է դիտողութիւն չէ արած երբ ես էի անդամակցում եւ այն էլ շատ եռանդուն կերպով։ Այդ հաստատութիւններն էլ մասամբ Մանթաշեանցին գրաւելու նպատակով եւ մասամբ էլ գուցէ իմ անձնական աշխատակցութիւնս գնահատելով, անընդհատ ամէն տեղ ընտրում էին ինձ, այն էլ յատկապէս գանձապետի պաշտօնում։ Ցանկահայոց համար մի կարեւոր «Հանդանակիչ Մասնաժողով» էր կազմուել 1909ին Թիֆլիս, որի հացէն՝ «Մանթաշեանց Ընկերութեան» դրասենեակն էր եւ բոլոր նուէրներն այնտեղ էին ուղղւում, որովհետեւ ես էի գանձապետը։ Կառավարութիւնն արտօնած էր այդ հանդանակութիւնն այն պայմանով, որ նպաստները Կ. Պոլիս հասցուին պաշտօնական ճանապարհով։ Ես էլ հանդանակուած դրամը փոխադրում էի Կ. Պոլիս ռուսական դեսպանատուն, որպէս զի Հայոց Պատրիարքարանին յանձնուի։ Զեմ յիշում հիմայ թէ ընդ ամէնը որչա՞փ է հանդանակուած, բայց քովս պահուած մի հաշուից տեսնում եմ, որ 1909ին մի անդամ դեսպանատուն փոխադրել եմ 36·000 ֆրանկ, մի ուրիշ անդամ 400 օսմ. լիրա, պատրիարքարան յանձնուելու համար։ Այս Ցանձնաժողովը միայն մի տարուան համար էր ընտրուած բայց այնքան յաջող գործունէութիւն է ունեցած, որ Իզմիրլեան Կաթողիկոս Էջմիածնից Թիֆլիս գալով ներկայացաւ Փոխարքային եւ խնդրեց, որ իրաւունք տայ մի տարի եւս շարունակելու հանդանակութիւնը։ Կոմս Վորոնցով-Դաշնակով, որ առանձնապէս յարգում էր Իզմիրլեանին, ընդունեց նրա խնդիրքը։ Ցանձնաժողովը 1910 Յունիս 18 թուականով կաթողիկոսական շնորհակալութեան կոնդակ ստացաւ իր օգտակար գործունէութեան համար։

Մանթաշեանց Թիֆլիսում։ Մանթաշեանց սիրում էր ապրիլ երկու քաղաքում, Թիֆլիսում եւ Պարիսում։ Նա սիրում էր Թիֆլիս, որովհետեւ իր ծննդավայրն էր եւ բազմաթիւ ծանօթներ, բարեկամներ ու ազգականներ ունէր այնտեղ։ Թիֆլիսցիք էլ մեծապէս յարգում էին եւ պարծենում էին նրանով։

Երբ 1903ին Նիկոլա Բ. կայսեր թագադրութեան համար քաղաքին առաջարկուեց, որ իր կողմից ներկայացուցիչ ուղարկէ Մոսկուա, Թիֆլիսի քաղաքային վարչութեան ընդհանուր ժողովը (քաղաքային դուման) միաձայն նրան ընտրեց այդ պատուաբեր պաշտօնի համար։

Մանթաշեանց Թիֆլիսում, քաղաքի կենդրոն Սոլոլակ թաղում իր սեպհական տունն ունէր, առջեւը ընդարձակ պարտէզով եւ մի քանի ուրիշ եկամտաբեր կալուածքներ, շէնութիւններ եւ այգիներ (Կրծանիսում)։ Նա համեստ մարդ էր եւ ապրում էր շատ համեստ։ Նա զոհարեղէն չէր սիրում եւ երբեք չէր գործածում, ոչ մատանի, ոչ փողկապի վրայ եւ ոչ առ հասարակ որ եւ է զարդ։ Նրա ժամացոյցն էլ շատ պարզ էր եւ պարզ շղթայով։ Միակ զարդն, որ նա սիրում էր

կրել, կենդանի ծաղիկն էր։ Նա երբեք չուզեց իր սեպհական կառքն ունենալ. նա միշտ կամ ոտքով էր պտտում կամ տրամուայով։ Հաղուագիւտ առիթներում միայն նա կառք էր վարձում։ Բայց երբ տեսաւ թէ Թիֆլիսի այսինքն Վրաստանի եւ Իմէրէթի թեմի կէս միլիոնի հասնող հայ ժողովուրդի Առաջնորդն իր պաշտօնական այցելութիւնների ժամանակ ստիպուած էր հասարակ փողոցային կառք գործածել, նա մի փառաւոր երկձի կառք ընծայեց Առաջնորդարանին։ Այն ժամանակ դեռ ինքնաշարժների (automobile) գործածութիւնը չէր ընդհանրացած։

Մանթաշեանց սեպհական տներ ունէր նաեւ Թիֆլիսի մերձակայ ամառանոցներում, Կոջորում եւ Բորժոմում, բայց վաղուց թողել էր այդ տեղերն եւ Մայիսին ճանապարհ էր ընկնում Պետերբուրգ եւ այնտեղից Պարիս, ուսկից ետ էր դառնում միայն Հոկտեմբերին։

Շատ օտարերկրացի հայեր, երբ Թիֆլիս էին գալիս, Մանթաշեանցի համբաւը լսելով աշխատում էին նրան տեսնել եւ եթէ հնար է նրա հետ տեսնուիլ ու ծանօթանալ։ Մի օր դրասենեակում զբաղած էի, երբ ծառան եկաւ ինձ յայտնեց թէ մի հայ եպիսկոպոս ուզում է Մանթաշեանցին տեսնել։ Նոր-բայազակ Բարգէն եպիսկոպոս Կիւլէսէրեանն էր, որ Էջմիածնից գալով Կ. Պոլիս էր գնում։ Մանթաշեանցին յայտնեցի եւ նա թէեւ զբաղած, իսկոյն ընդունեց եւ երկարօրէն տեսնուեցան։ Ես ներկայ էի նրանց տեսակցութեան։ Օտարներ, հայ կամ մանաւանդ եւրոպացի, ընդունելու ժամանակ Մանթաշեանց ինձ պահում էր իր քով, եթէ ի հարկէ որ եւ է գաղտնի խօսակցութիւն չկար նրանց մէջ։ Մանթաշեանց երբեմն դժուարանում էր յարմար բառեր գտնելու հայերէն կամ ֆրանսերէն իր միտքը յայտնելու համար եւ ես նրան լաւ ուսումնասիրած լինելով, զգում էի թէ ի՞նչ էր ուզում ասել եւ անմիջապէս օգնում էի։ Բարգէն սրբազան Կ. Պոլիս վերադարձին, «Արեւելք» լրագրի մէջ ընդարձակ յօդուածով նկարագրել էր իր այս տեսակցութիւնը։

Մանթաշեանց՝ երեկոներն երբ գործից ազատ էր, սովորաբար թատրոն էր գնում, որ շատ էր սիրում եւ կամ թուղթ էր խաղում ընտանեկան շրջանում եւ ակումբում։ Նրա ամէնից աւելի սիրած խաղը Բրիջն (bridge) էր։ Պատահում էր, որ ես էլ մասնակցում էի եւ Մանթաշեանց մօտս նստած խորհուրդներ էր տալիս ինձ։ Նա առհասարակ շատ ընկերական մարդ էր, եւ առանձնութիւնից սաստիկ նեղւում էր։

Պարիսում։ Մանթաշեանց այստեղ իր մշտական ճոխ բնակարանն ունէր Avenue des Champs Eliséesի վրայ։ Նա Պարիսում բոլորովին տարբեր կեանք էր վարում։ Այստեղ նա ոչ մի ծախք չէր խնայում կեանքի հաճոյքը լիովին վայելելու համար։ Նա ապրում էր իբրեւ հարուստ rentier։ Նա իր օթեակն ունէր Մեծ Օպէրայում (Académie nationale de musique), ուր յաճախ հրաւիրում էր իր ծանօթներին եւ բարեկամներին։ Թէ հայ, թէ ռուս եւ թէ գաղղիական շրջանների մէջ նա ընդարձակ կապեր եւ ծանօթութիւններ ունէր։ Jean Goujon փողոցում հայ եկեղեցի կառուցանելուց յետոյ նրա յարգն եւ հռչակն անկասկած աւելացել էր։ Գաղղիական կառավարութիւնը նրան պատուել էր Légion d'Honneur շքանշան պարգեւելով։ Այս եկեղեցին նոր յոյսերի եւ ակնկալութիւնների ծնունդ էր տուել Պարիսի հայ եւ նոյն իսկ ֆրանսական շրջաններում։

Անուանի ֆրանսացիների ուղերձը։ Մի օր Մանթաշեանց Թիֆլիսում ստացաւ մի ընդարձակ ֆրանսերէն գրութիւն, որի ներքեւ փայլում էին բազմաթիւ ֆրանսական հանճարների անունները գիտական, գրական եւ նոյն իսկ քաղաքական աշխարհից։ Ուղերձը խմբագրուած էր շատ ճարտարօրէն։ Ստորագրող մեծանուն ֆրանսացիք, որոնց մէջ, որքան յիշում եմ կային Լավիս, Էմիլ Զօլա եւ մինչեւ իսկ Օրլէանի դուքսը, շնորհակալութիւն էին յայտնում, որ Մանթաշեանց Պարիսը զարդարել էր հայկական ոճով մի նոր եւ գեղեցիկ շէնքով, որ զոհացում էր տալիս մայրաքաղաքի բազմամարդ հայ գաղութի կրօնական պէտքին։ Բայց, ասուած էր այնտեղ, հայկական վաղեմի սովորութիւն էր, որ ամէն հայ եկեղեցի իր քովը ունենայ նաեւ դպրոց, հայ մանկուց ուսման պահանջը յագեցնելու համար։ Նրանք խնդրում էին, որ Մանթաշեանց յանձն առնէ հայկական ուսումնարանով եւս օժտել Պարիսն եւ իրենց կողմից խոստանում էին, որ կը գործադրեն իրենց ամբողջ հեղինակութիւնը ֆրանսական կառավարութեան հովանաւորութիւնն

© National Library of Armenia

եւ հարկ եղած իրաւունքները ձեռք բերելու համար։

Երբ կարդացի եւ բացատրեցի այս բոլորն եւ մանաւանդ երբ տեղեկութիւններ տուի այն հռչակաւոր անձերի մասին, որոնք ամբողջ գրական աշխարհին ծանօթ էին, Մանթաշեանց մեծապէս զգածուեց եւ այն բոպէին հակամէտ էր նրանց խնդիրքն ի կատար ածելու։ Պարզ էր, որ այս դիմումը թէպէտ Ֆրանսացիներից ստորագրուած բայց իրօք Պարիսի հայոց մաքի եւ փափագի արդիւնքն էր։ Նրա գլխաւոր հեղինակը Պ. Արշակ Զօպանեանն էր, ինչպէս յետոյ իմացանք։ Մանթաշեանց ուղերձը գրաւենակիցս տարաւ տուն իր մտերիմներին ցոյց տալու եւ նրանց հետ խորհրդակցելու։ Այս վերջինները Մանթաշեանցի ողեւորութեան վրայ պաղ ջուր ածեցին, զանազան առարկութիւններով, որոնց գլխաւորներն էին թէ պէտք չէր շափազանց կարեւորութիւն տալ այդ դիմումին, որովհետեւ Ֆրանսացիք անշուշտ ստորագրել են անգիտակցօրէն, այսինքն իրենց դիմող հայերի խնդիրքը յարգելու համար, այլապէս նրանց համար այնքան էլ հետաքրքրական չէր թէ հայերը Պարիսում կ'ունենա՞ն իրենց յատուկ դպրոցը թէ չէ։ Առանձնապէս ազդել էր Մանթաշեանցի վրայ այն առարկութիւնը թէ այդպիսի մի դպրոցի հիմնումն ու պահպանումը երկու երեք միլիոն ֆրանքի զոհողութիւն էր պահանջում նրա կողմից. ինչո՞ւ համար այդպիսի խոշոր գումար ծախսել Պարիսում, երբ Կովկասի հայ ժողովուրդը շատ աւելի մեծ կարիք ունէր դպրոցի եւ այլ ազգային պէտքերի համար։ Եւ ուղերձը մնաց անհետեւանք։

(Շարունակելի։)

ՍԱՐԻԽԱՆ

ԵՐԵՔ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՏԱՂԵՐ

ՀԻՆ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀԻՍՈՒԹԵՆԷՆ

Հետեւեալ երեք տաղերը գտած եմ Երեւանի Պետական Թանգարանի Թ. 395 Տաղարանին մէջ, որ գրուած է 1620ին Խրիմի Կաֆա քաղաքին մէջ։

Տաղերս երգուած են ի պատիւ փեսային եւ կը հիւսեն գովքը Թագաւորին։ Անոնք հայ ժողովրդեան ստեղծագործութիւններն են, գրի առնուած Կաֆայի մէջ։

Բնագիրը կը կարօտի սրբագրութեան. տեղ տեղ անընթեռնելի է նաեւ Ձեռագիրը, որ առ հասարակ անխնամ պահուած է։

Մատեանը ընթերցումն երեւան պիտի բերէ սքանչելի պատկերներ այս տաղերու մէջ։

1. Թագաւորը վաճառք մը առնն կը բերէ. մերձաւորները կը բերեն ընծայ ընտիր վարդ մը, խնձոր մը բարձրաճղէն, սերկեւիլ մը միջնաճղէն, խաղող մը ներքնաճղէն։ Տուն ու ընտանիք կը կազմուի, առնկ մը նորաբոյս կը տնկուի, որ կ'աճի եւ կը բարդաւաճի, առուն կը գրգէ, արեգակը կը ծագի, եւ Թագաւորին բաժին կ'իյնայ ջուրէն ալ լոյսէն ալ։

2. Թագաւորին համար չէնք մ'է յօրինուած, չէնք մը աստուածակերտ, գոբքով ամրացած։ Քարերը քաջերն են բերած, հիմը մարգարէներու ձեռքով ձգուած, գերանները, նուշի փայտէ են, դռան արեգաներն ու կուսաններն են տաշած. առնոնք տաշուած են եւ տաշեղներէն տաճար յօրինուած, բարձրարերձ եւ երկնապող, Թուխ ամպերու մէջ ծիլամուխ։ Տաճարին դուռը դէպի արեւելք է բացուած, եւ արեւմտակողմը խաչ մը կանգնուած։ Ամէն մանող տաճարի սեմէն ներս ծունր կը դնէ, ամէն դուրս եկող մոմ մը կը վառէ. ով առջեւէն կ'անցնի, կը խաչակնքէ ինք զինք, եւ ով ետ կը դառնայ խաչին համբոյր մը կը բաշխէ։

Եկեղեցին՝ Քրիստոսի Հարսը եւ ամուսնութեան սուրբը խորհուրդը հրաշալի նկարի մը մէջ պատկերացուած են հոն եւ համեմատուած։

3. Երրորդ տաղին մէջ խանդաղատուած է բնագիրը, կը կարօտի ընտիր ձեռագրի մը։ Ո՞վ է պարոն Ակնարիկոս։

Տեսարանը կը բացուի Ս. Թորոս եկեղեցւոյ առաջ։ Սուլթան Թագուհին եկեղեցւոյ դռան առջեւ կը պատահի Թագաւորին։ Զիւն վար կ'իջնայ եւ կը դիմէ Թագաւորին անոր ձեռքը համբուրելու եւ կ'երգէ անոր գովքը. Թագաւոր, դու իմ ոսկի կարիճս, ո՞ր մայրն է զքեզ բերեր, եթէ ոչ մայրը, հապա ո՞ր կինն է դայեակ մտեր ու զքեզ սնուցեր։ Եղնի՞կն է արդեօք զքեզ իւր մորին առեր եւ իւր կաթով զքեզ սնուցեր։ Աստղերն են ծագեր երկնակամարին վրայ ու լուսնկան լուսէն հաներ։ Ցիսուս իւր տնէն եկած Ցորդանան է եկած մկրտուելու եւ Յովհաննէսէն կնիք առնելու։ Դուն իմ պարծանքս ես, մեր նոր Թագաւոր։

Այս է մօտաւոր միտքը տաղիս, որ Թանկագին գոհար մը կը ներկայանայ հայ ժողովրդական բանահիւսութեան մէջ։

Տաղերս պէտք է ունեցած ըլլան նաեւ եղանակ, որովհետեւ անոնք յօրինուած են մենեղգի եւ խմբերգի համար։

Հ. Ն. ԱԿԻՆԵԱՆ

ՀԱՐՍԱՆԵԱՑ ԵՐԳ

1[1].

Աստուած շնահաւոր, Աստուած շնահաւոր
այնէ Թագաւորին վաճառն, որ առաւ,
Թագաւոր։
Թ'էն վարդըն ընտրով, Թ'էն վարդըն ընտրով
էառ ի նոան հատրս համարով, Թագաւոր։
Թէ կին ի կուսանաց, Թէ կին ի կուսանաց
էառ, խաչ հանել ի անձնաւորաց (՞), Թ.։
Թէ բարձրաճըղին, Թէ բարձրաճըղին,
այսաւր քեզ խընծոր բերեմ խաղալոյ, Թ.։
Թէ միջնաճեղին, Թէ միջնաճըղին,
այսօր սերկեւիլ բերեմ սիրելոյ, Թագաւոր։
Թէ ներքնաճըղին, Թէ ներքնաճըղին,
այսօր քեզ խաղող բերեմ բաժակի, Թ.։
Բաժակն որ ի բեմբ, բաժակն որ ի բեմբ,
ելլեր քրիստոնեայք օրէնք հաստատէր, Թ.։
Թէ տուն վ ընտանի, Թէ տուն վ ընտանի,
տունկ են պատրաստեր, որ երթար աճէր,
Թագաւոր։
Աճէր ու դիճէր, աճէր ու դիճէր,
ելլէր կա՞ֆային դաշտերըն ծածկէր, Թ.։
Թ'էն առու քալէ, Թ'էն առու քալէ,
այսօր ի լուսոյն ընկել քեզ բաժին, Թ.։

Էջմ. Թ. 395, 93 ա։

2[2].

Եկէք այսօր նոր խնդանք *
որ ամէն չինունք յօրինած, Թագաւոր։
Շինուածք ի չինուց վայլէր *,
մենք սովոր յորդոր կենալու, Թագաւոր։
Աս տունս Աստուծով չինած *,
իւր ամէն զօրօքն յօրինած, Թագաւոր։
Քարերն էր քաջանց բերած *,
հիմնած հին մարգարէից, Թագաւոր։
Գերանն էր նշու բերած *,
հարեղայ, կուսանք էր տաշած, Թագաւոր։
Տաշած էր, տաշեղ հանած *,
տաշեղով տաճար յօրինած, Թագաւոր։
Խիստ բարձր էր եւ ի վեր քաշած *,
Թուխ ամպին հետ կազմեցուցած, Թ.։
Թ'էն դուռն արեւելք բացած *,
Թ'էն արեւմուտք խաչ կազմեցուցած, Թ.։
Ով մրտնուր, նա ծունր ածէր *
ով ելէր, վառէր մոմեղէն, Թագաւոր։
Ով անցընէր, նա խաչ հանէր *,
ով դառնայր, խաչըն համբուրէր, Թ.։

Էջմ. Թ. 395, 93 բ։

3.

Ա՞յ կանանչ, ա՞յ կարմիր *,
Ա՞յ սարեկս որ եղաւ, իմ պարոն Ակնարիկոս,
խա՞յ սարեկս որ եղաւ։
Թէ եկին ի յիրար *,
Սուլթանի[1] մօտան, ի. պ. Ա.
ի սուրբ Թորոսու։
Թէ Սուլթանի մօտան *,
ա՞յ մաքուր[2], ի. պ. Ա.
ջուրըն կու խաղայ.
Թէ Սուլթան ի ձիուն *,
վար վագեց, Թագաւորին, ի. պ. Ա.
աջըն համբուրեց։
Թագաւոր իմ ոսկի *,
ա՞յ, կըտրիճ, աճափ ո՞ր — ի. պ. Ա. —
մարըն զքեզ բերել։
Թէ զինք մարդ մարըն չէ *,
ա՞յ, բերել, ո՞ր կընիկ — ի. պ. Ա.
դայեակ սընուցեր։
Թէ զինչ եղն ի մորին[3] *.
ա՞յ, բերել, իւր կաթին — ի. պ. Ա.
կաթով սընուցեր։
Թ'էն աստղունք ինքն օրօրքն *,
ա՞յ, տրւել. լուսնկան — ի. պ. Ա.
ի լուսնէ հանել։

[1] Ձեռագիրը՝ 2 Թագորին։ — 6 Թէ զկինն կրկնուած է։ — 14 բեմը։ — 17 տունկըն։
* Իրաքանչիւր տան առաջին տողը կրկնել։
[2] Ձեռագիրը՝ 2 չինունք աւրինած։ — 3 չինուաւք։ — 4 որդոր։

7 քաչանց։ — 12 տաչելով։ — 14 թուխա։
* Առաջին տողերը կրկնել։
[1] Ձեռ. ||||նի։
[2] Ձեռ. «այ °լ|ջ||ր»։
[3] Ձեռ. ինքն աւրաքրքն։

© National Library of Armenia